ննջեցյալը ուզենա տուն վերադառնալ՝ մուտքը չգտնի, քանի որ նրա այդ վերադարձը կարող էր լինել գնացած ծանոթ ճանապարհով, ուստի աշխատում էին այդ ճանապարհը կապել։

Առհասարակ Զանգեզուրումն էլ, ինչպես այլ հայաբնակ գավառներում, ամեն միջոց ձեռք էին առնում դժվարացնելու ննջեցյալի վերադարձը տուն։ Այսպես նրա անկողինը թողնում էին ոչ թե պառկելու համար մաքուր հարդարված, պատրաստի սարքված, այլ յոթ օր անլվա և ծալած[89]՝ կամ ննջեցյալին վերցրած տեղում դնում էին քար։ Անկողնի և քարի վրա յոթն օր լացուկոծ էին անում։ Քար դնելու սովորությունը Սիսիանում և Ղարաբաղի Վարանդա գավառում[90] բացատրում են այն ցանկությամբ, իբր թե որպեսզի մեռնողի «հիշատակը հաստատուն մնա այդ տան մեջ», ասել է՝ ննջեցյալը չմոռանա այդ տունը։ Սակայն հնարավոր է և այլ, բոլորովին հակառակ մեկնաբանություն, որը տալիս են օրինակ Կապանի Վ. Հանդ գյուղի բնակիչները և որը գրանցված է նաև Բորչալուի հայկական գյուղերում, այն է, որ ննջեցյալի «ոտքը ծանր լինի այդ օջախի վրա և որ նա վերջին մեռնողը լինի այդ տան մեջ»։ Քարի ծանրությունը պիտի ծանր դարձներ ննջեցյալի ոտը, եթե փորձի վերադառնալ՝ ոտը ծանր լինի, չկարողանա վերադառնալ, քարն իր ծանրությամբ ծանրացնում էր ննջեցյալի ոտը. «ոչ թե իր տակը կոխոտում, ճխլում է մահը», ինչպես ասում է Գ. Զուրսինը[91]։ Կարելի է ավելի հիմնավորված համարել Վ. Հանդ գյուղում տրվող բացատրությունը, քանի որ ամեն միջոց էր ձեռք առնվում, որ ննջեցյալը չմնա իր տան կարոտով, ի վիճակի չլինի վերադառնալու և կարոտից մեկն ու մեկին հետը տանելու։ Օխտն անցած՝ քարը հեռու էին շպրտում՝ ոտքը բոլորովին կտրում էին, անկողինը խնամքով լվանում էին և այդպիսով ննջեցյալի այդ անկողնու վրա պառկած լինելու և նրան պատկանելու հետքերը ոչնչացնում էին։ Շորերը լվանալուց հետո տալիս էին լողացնողներին և գերեզման փորողներին, իսկ եթե բաժանում էին ազգականների մեջ, այդ արվում էր ոչ թե նրա համար, որպեսզի ազգականների մեջ նրա հիշատակը կենդանի մնա, այլ որպեսզի նրա կարոտը հեռացվի անմիջական տանեցիներից և բաժանվի ազգականների միջև։ Տանեցիները պահում էին իրենց մոտ ննջեցյալի շորից շատ-շատ միայն մի կտոր, որպեսզի տան մեջ ուրիշ մեռնող չլինի, այդ կտորը հագնելու ամբողջական մի բան չէր, որի համար նա ուզենար վերադառնալ և այդ իրի հետ հեռանալիս որևէ մեկին հետը տաներ։ Սպանվածին և առհասարակ ամեն տեսակի ննջեցյալին պիտի ամբողջապես թաղեին։ Եթե մնար նրա մարմնի մի մասը, թեկուզ եղունգը, որի միջոցով նա պահում էր նյութական կապը իր ընտանիքի հետ, տան մեջ մեռնող կլիներ։ Քահանան հուղարկավորության ժամանակ չպիտի ետ նայեր, կրկին այն պատճառով, որ տանը ուրիշ մեռնող չլինի։ Դրանով մեռնողը քահանայի միջոցով արտահայտած կլիներ իր կարոտը կամ իր փափագը տանը մնալու կամ տանեցիներից մեկն ու մեկին իր մոտ տանելու[91]։ Նույնիսկ այն բահի, թուրայի երկաթե բերանը, որով գերեզմանն էին փորել, թարս էին նստեցնում փայտե կոթի վրա և բերելով տուն այդպես թարս վիճակի մեջ, յոթ օր պահում էին պարզ է նույն նպատակով՝ շրջելու, թարսեցնելու ննջեցյալի վերադարձը։ Թաղման մասնակցածները ժամհացի համար տուն վերա-

---

89 ՝ Արծվանիկ։

90 Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 102, Վարանդա, էջ 180, Чурсин. Г. Ф., Указ. соч., էջ 243։

91 СМОМПК, вып. XVII, отд. II, էջ 200—201։